ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N 02/8375-2021

« 24» հունիս 2021թ.

0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☎ (374-10) 65-05-53, 65-03-05
Էլ. փոստ՝ info@hlib.am

# ՈՐՈՇՈՒՄ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի «ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 0352 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՓՈՓՈԽ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավարի տեղակալ Գոհար Դարբինյանս, քննության առնելով «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հիվանդանոցի ընդունարանի հերթապահ բուժքույր՝ Օլյա Զաքյանի (այսուհետ՝ Բողոքաբեր) վարչական բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով հարավային տարածքային կենտրոնի պետի 2021 թվականի ապրիլի 29-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0352 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում) և գործում առկա վարչական վարույթի վերաբերյալ այլ նյութերը.

## ՊԱՐԶԵՑԻ

1. ***Բողոքարկման առարկան և պահանջը.***

Օլյա Զաքյանը ներկայացրել է բողոք Տեսչական մարմնի հարավային տարածքային կենտրոնի պետի 2021 թվականի ապրիլի 29-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0352 որոշումն անվավեր ճանաչելու մասին:

***2. Գործի նախապատմությունը և վարչական բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.***



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա.Արմենակյան փ. 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ հոդվածի 2-րդ մասը, և հաշվի առնելով Տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 20110124 հանձնարարագիրը, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Գր. Տաթևացու 31 շենք հասցեում գործունեություն իրականացնող «ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերությունում (այսուհետ՝ Ընկերություն) (գրանցման համարը՝ 222.120.00770, ՀՎՀՀ՝ 09211641) տնօրեն Դավիթ Բենիկի Մաշուրյանի ներկայությամբ 11.12.2007թ.-ից մինչ 23.02.2021թ ժամանակահատվածի համար Տեսչական մարմնի մասնագետների կողմից 24.12.2020թ.-23.02.2021թ-ը իրականացվել է ստուգում:

Ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում պարզվել է, Ընկերության հիվանդանոցի ընդունարանի հերթապահ բուժքույր՝ Օլյա Զաքյանի կողմից կատարվել են հետևյալ իրավախախտումները.

Ընկերության էմերջենսի ծառայության հերթապահ բուժքույր Օլյա Զաքյանի կողմից «Ամբուլատոր հիվանդների հաշվառման մատյան»-ը վարվում է թերություններով՝ չեն լրացվել «անձնագիր», «ախտորոշում և ցուցաբերված բժշկական օգնություն», «պատճառները», «բժշկի անուն, ազգանուն, ստորագրություն» վերտառությամբ սյունակները որով խախտվել են ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 18-ի «Հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության ընդունարանում պացիենտի վարման գործելակարգը հաստատելու մասին» N 44-Ն հրամանի հավելված 2-ի ձև 2-ի պահանջները:

Հաշվի առնելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածը, 2021 թվականի ապրիլի 22-ին կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ N 359 արձանագրությունը, որը վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության ծանուցագրի հետ միասին առձեռն հանձնվել է Օլյա Զաքյանին:

2021 թվականի ապրիլի 29-ին կայացվել է «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0352 որոշումը, որով՝ Օլյա Զաքյանը, որպես խախտում թույլ տված անձ, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը խախտելու համար՝ «Վարչական



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա.Արմենակյան փ. 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 47.18-րդ հոդվածի 3-րդ մասով ենթարկվել է վարչական տույժի՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ վարչական տուգանքի:

2021 թվականի հունիսի 8-ին Տեսչական մարմին է մուտքագրվել Օլյա Զաքյանի վարչական բողոքը՝ թիվ 0352 որոշումը անվավեր ճանաչելու մասին:

Բողոքի հիման վրա նույն օրը Տեսչական մարմնում հարուցվել է բողոքարկման վարույթ:

Հարուցված բողոքարկման վարույթի շրջանակներում 2021 թվականի հունիսի 24-ին տեղի է ունեցել լսում, որին պատշաճ ծանուցված է եղել Օլյա Զաքյանը, սակայն միջնորդել է, որ գործի քննությունը անցկացվի առանց իրեն:

Գրավոր բողոքում Օլյա Զաքյանի կողմից նշվել է, որ ինքը «Ամբուլատոր հիվանդների հաշվառման մատյան»-ում չի լրացրել միայն հանրային ծառայությունների համարանիշները, այն էլ միայն մի քանիսինը: Նաև նշել է, որ այլևս չի աշխատում «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում:

***3. Վարչական մարմնի պատճառաբանությունները և եզրահանգումները.***

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ավագ և միջին բուժաշխատողները պարտավոր են՝ օրենսդրությամբ սահմանված կարգով լրացնել, վարել և շրջանառել բժշկական փաստաթղթերը, այդ թվում՝ էլեկտրոնային առողջապահության համակարգում:

Տվյալ դեպքում խախտվել են ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 18-ի «Հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության ընդունարանում պացիենտի վարման գործելակարգը հաստատելու մասին» N 44-Ն հրամանի հավելված 2-ի ձև 2-ի պահանջները:

Բողոքաբեր Օլյա Զաքյանի կողմից նշված այն փաստը, որ ինքը «Ամբուլատոր հիվանդների հաշվառման մատյան»-ում չի լրացրել միայն մի քանիսի հանրային ծառայությունների համարանիշները՝ չի կարող իրեն ազատել պատասխանատվությունից, քանի որ վերջինս կողմից խախտվել են



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA
0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա.Արմենակյան փ. 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները:

Օլյա Զաքյանի կողմից բողոքում նշվել է նաև, որ նա ներկայումս չի աշխատում «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում, սակայն այս դեպքում ևս դա չի կարող հանդիսանալ պատճառ նրան պատասխանատվությունից ազատելու համար, քանի որ Տեսչական մարմնի հարավային տարածքային կենտրոնի կողմից ստուգում իրականացնելու ժամանակահատվածում բողոքաբեր Օլյա Զաքյանը փաստացի աշխատել է և իրավախախտումը կատարվել է հենց իր կողմից, իսկ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն է կրում ֆիզիկական անձը՝ իր կողմից ցանկացած ժամանակահատվածում կատարված իրավախախտման համար:

Վարչական մարմինը, ուսումնասիրելով գործում առկա նյութերը և հաշվի առնելով փաստական հանգամանքները, հաստատված է համարել, որ կատարվել է վարչական իրավախախտում, որի համար պատասխանատու է Օլյա Զաքյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 292-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատը կամ բողոքը քննող մարմինը (պաշտոնատար անձը) ստուգում է ընդունված որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատը կամ բողոքը քննող մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) որոշումը թողնում է անփոփոխ, իսկ գանգատը կամ բողոքը՝ առանց բավարարման.

2) բեկանում է որոշումը և գործն ուղարկում նոր քննության.

3) բեկանում է որոշումը և կարճում գործը.

4) վարչական իրավախախտման համար պատասխանատվության մասին նորմատիվ ակտով նախատեսված շրջանակներում փոխում է նշանակված տույժի միջոցը, բայց այնպես, որ տույժը չխստացվի:



ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ և ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA
0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան փ. 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Եթե պարզվի, որ որոշումն ընդունել է տվյալ գործը քննելու համար ոչ իրավազոր մարմին (պաշտոնատար անձ), ապա այդպիսի որոշումը բեկանվում է և գործն ուղարկվում է իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) քննությանը:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատի կամ բողոքի առթիվ ընդունված որոշման պատճենը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվում է այն անձին, որի նկատմամբ այն ընդունված է, տուժողին՝ նրա խնդրանքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի՝ համաձայն վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքերն են՝ ա) սույն օրենքի 63-64-րդ հոդվածներով սահմանված հիմքերը.

բ) վարչական վարույթը դրա իրավունքը չունեցող պաշտոնատար անձի կողմից իրականացված լինելը, նաև այն դեպքում, եթե դա իրականացրել է կոլեգիալ մարմինը, որի կազմում եղել է վարույթին մասնակցելու իրավունք չունեցող պաշտոնատար անձը.

գ) վարչական ակտը վարույթն իրականացրած պաշտոնատար անձի (անձինք) կողմից ստորագրված չլինելը կամ ստորագրելու իրավունք չունեցող անձի (անձինք) կողմից ստորագրված լինելը:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ընթացակարգային նորմերը խախտելը վարչական ակտի բեկանման հիմք կարող է դառնալ միայն այն դեպքում, երբ բողոքը քննարկող վարչական մարմինն իրավասու չէ ընդունելու բողոքարկվող վարչական ակտը, իսկ 3-րդ մասով՝ վարչական ակտը կարող է բեկանվել մասնակիորեն, եթե վարչական ակտում առկա են սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերը, և դրանք բեկանելուց հետո չբեկանված մասը կարող է ինքնուրույն գործել:

Քննության առնելով վարչական բողոքը, հաշվի առնելով բողոքարկման առարկան, պահանջը և այն հիմնավորող փաստարկները և ուսումնասիրելով վարչական վարույթի վերաբերյալ նյութերը գտնում եմ, որ վարչական վարույթի ընթացքում պահպանվել են օրենքով սահմանված ընթացակարգային նորմերը, վարույթն իրականացնող մարմինը գործել է օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում և կայացրել է օրինական և հիմնավորված որոշում:



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա.Արմենակյան փ. 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 23-րդ գլխի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-77-րդ հոդվածների պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օլյա Զաքյանի 2021 թվականի հունիսի 8-ի վարչական բողոքը մերժել:

2. Տեսչական մարմնի հարավային տարածքային կենտրոնի պետի 2021 թվականի ապրիլի 29-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0352 որոշումը թողնել անփոփոխ:

3. Սույն որոշումը ծանուցել բողոքաբեր Օլյա Զաքյանին (ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Մամիկոնյան 164/4, olya.zaqyan91@mail.ru):

Восстановимая подпись

X

ԳՈՀԱՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Подписано: DARBINYAN GOHAR 5705820186 Գ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Սույն որոշումը ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ժամկետում ՀՀ վարչական դատարան:



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա.Արմենակյան փ. 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107